

ներկայացնում է մի փառաւոր հրապարակ, որպիսին օրինակ Դոմիցիլլայի կատակումքինն է. իսկ նոցա ներքին մասը իրար հետ հիւսուած նեղ միջանցքների մի ցանցն է ներկայացնում. այս ասակ են Վալլիստոսի, Եկնիի և ուրիշ կատակումքների. Այդ միջանցքները 1—5 յարկանի են, (որոնցից վերջին յարկերը՝ աննկատելի կերպով իջնող անցքերի պատճառով, կրթման դժուար է սրոշել) և լուսաւորում են կամարի միջից եկած լոյսով:

Այդ միջանցքները մէկ արշիւնից մինչև երկու սաժին բարձրութիւն ունին:

—Ապա դասախօսը գալիս է նկարագրելու կատակումքների ներքի մասը, Մեռեւների մարմինները լուսանում էին և կտաւի մէջ փաթածում ու դնում պատերի խոռոչներում, յետոյ ծածկում տախտակներով. տախտակների վերայ գրում էին զանազան արձանագրութիւններ, ու նկարում սիմվոլիքական պատկերներ: Երկար միջանցքները բաժանող ճանապարհի վերայ կային տարբեր մեծութիւն ունեցող բնակարաններ՝ կարիկուներ (սեղաններ), կրիպաներ (մատուռներ), որոնց դասը անբաժան է ժողովրդի մասից, և կուպէլներ (ընդարձակ եկեղեցիներ), սոքա բոլորն էլ միացած էին պատերի խոռոչների հետ, որոնց մէջ մինչև այսօր մեռելների սկզբներ են գտնուում: Սեղանների տեղը բռնում էին այս եկեղեցիներում, սովորաբար, նահատակների գերեզմանները, Վատակումքներն ուսումնասիրելիս առանձնապէս ուշադրութիւն գրաւողը պատերի վերայ եղած պատկերներն են, որոնց մէջ առաջին երկու դարերից շատ քիչ բան է մնացել, հետեւեալ պատճառներով. քրիստոնեաները վախենում էին, որ այդ պատկերները նորամուտների և թերահաւատների համար գայթակղութեան քար կլինեն, և առիթ կտան նոցա կրկին անգամ հեթանոսութեան դիմելուն. սակզագործութեան գաղափարն էլ դեռ նկարողների հոգու մէջ չէր արմատացել ու ներքին բովանդակութիւն չէր ստացել. քրիստոնեաների մէջ կային նաև պատկերազրութեան թշնամիներ: Չնայած այս բոլորին, առաջին դարուց մնացած պատկերազրութեան և կենդանազրութեան յիշատակներ են պահուել:

Այդ պատկերազրութեանց մէջ աչքի են ընկնում զանազան սիմվոլներ, որոնք նախկին քրիստոնեաների հասկացողութիւնները և հայեացքներն են ցոյց տալիս. այսպէս օրինակ, խարխիւր քրիստոնէական յուսոյ նշան է. աղանիւն, ծառի ծիւղ բռնած կտուցի մէջ՝ խաղաղութեան նշան է. գոյութիւն չունեցող Ֆլնիքս թռչունը անմահութեան նշան է. արդաղը—արթնութեան նշան է՝ պատրաստ և արթուն մնալու վերջին դատաստանի համար. գառը Յիսուսի նշանն է, խաչ առաջին երեք դարերում չի պատահում: Առասպելական Որփեւոր ընձենու մորթի մէջ փաթածում իւր քնարն


է ածում, իսկ նորան վայրենի կենդանիներն են շրջապատել ու լսում երաժշտութիւնը, — սա Քրիստոսի նշանն է, երբ իւր շուրջը հաւարուած ժողովրդին քարոզում էր:

Սիմվոլների միւս դասին են պատկանում նոքա, որոնք Քրիստոսի առակների բովանդակութիւնն են տալիս. ինչպէս օրինակ, քաջ հովուի առակը՝ մի երիտասարդ, որ ուսերի վերայ ունար է գրել:

Եւեոյ պատահում են Ս. Կրքից հանած վանաղան պատկերներ, որոնք պարապորդներին զրաղեցնելու և փողոցային տեսարաններից հեռի պահելու համար էին: Աչքի է ընկնում իւր տարբերակութեամբ այս պատկերը. մի մարդ կանգնած է, իսկ շաշակին ունի մի ձուկ և մի զամբիւղ հաց, սա էլ Քրիստոսի և հացի բեկման խորհրդի նշանն է, ըսկ այսպիսի նշանագրութիւնից, ասում է յարգելի դասախօսը, սկսուեց քրիստոնէական արուեստը, որ ժամանակի ընթացքում հասաւ մեր ժամանակակից բարձր գեղարուեստական ձևերին:

Յարգելի պրոֆեսորը դասախօսութեան ընթացքում ցոյց է տուել մի շարք պատկերներ՝ կատակումքների շինութեան ձևը և սիմվոլիքական պատկերների տեսքը աւելի պարզելու համար:

Եզ. ս.



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Յ

Գ Ի Դ Գ Թ — Կ Ե Ն Ա Ճ Է Ը Գ Թ Ե Ի Կ, Կ Ի Ը Կ Ա Ն Տ Ո Ղ Կ Ի Զ

1. Գրիգոր Բաթիկի մասին՝ Աղեքեան, Լամբան Թայմաուտի, Օրբեհան, Կիւրխոս, Սամաէի Անեցի, Ասողի:
2. Յիզբարուգիսի վիսյարանդիւնը Գրիգորի մասին. Անհասկալութեան ճեղք. Նիխուրական, Նահապետ և Քնարիկ մարգարաններ: Յիզբարուգիսի Անհասկալութեան միջոքութեանը—553, Անյետի, 9. Յիզբարուգիսի վիսյարանի կերտ ընկերակից ներսու Բաթիկի:
3. ներսու Բ-ի բողոքը. յանուն Բաթիկի վանք Դուրեւում 547—8 թուին:
4. Մանանիք—Գրիգորի նորացուց վիսյարանդիւն, Անհասկալութեան քուսակներ—545—6 թուին, Սիւրեան սոսի. Երուանց Վշեմսպ Վրաց մարգարան, Մանանիքի իշխանութիւն կրկնում Արասանում, Անհասկալութեան կարտանի գրանք:
5. Դուրեւան ժամանակի յեանութեան նշաններ. Որդի Որդի—Որդի Կատասայ, կրով սակեղ:

6. Վկայարանութեան ժամանակը ոչ ոչ 12-դ դարից. Ան B մտազեր: 7. Գր. Ռաժկի վկայարանութիւնը ասորե-
 րէն. նախասկիւտեան բուսական 538 վերկ: Պիտան—Իււշ-
 անայ—Երուանդ—Վշնասայ? Մանաճիւր անունը նիւն է՝ վա-
 ինական. ասորիւն է հայր անկախ եւ միւնեանցից: 8. Սա-
 անան պետական օրէնքը կրօնափոխմանի վերաբերու-
 րեամբ. մահուան պատիժ դեմակոտոյաներին. ի ծեկ է
 ի մանկութենէ քրիստոնեաները ազատ են. Սահակ Աստու-
 անցեցու է ներսուս ուսմանի դաստիարակութեան օրէնա-
 քը: 9. Գրիստոնեաների աշխարհահայեցողութիւնը խղճի
 պատրան մասին. Եանայիվանի ուրբերոյ կանոնը—
 ժամ ուրացողներին: 10. Մանաճիւրը կենտրոնական վկայ.
 Երրորդը հնչեցաւ. Երրորդի բարոյները եւ գերեզմանը,
 խոթիկները ժողովը, մի խոթիկ մահապատ: 11 Յնագիր
 է արեւոյ թե ասորեանցից բարգմանութիւն Երրորդի
 վերաբերութիւնը: 12. Չկայ արեւոյ վրացեան Գրիգոր—
 Մանաճիւրի վկայարանութիւն. Ռաժկի պատիկ վկայ
 Արտանուն: 13. Գրիգոր Պարսկի գրուած յայտան
 մտքիւնը հայ մատենագրութեան մէջ:

1. Մ. Աւգերեանը իւր Լիակատար Վարք
 Սրբոցում (Հատ. Ա. էջ 461—467) մի ամբողջ
 վկայարանութիւն է, Հարադրել, Հիմնուելով Հայ
 պատմիչների վրայ, Գրիգոր Պարսկին նուիր-
 ւած, ուր պատմում է, թէ իբր Գրիգոր—Մա-
 նաճիւր ուսմանը քրիստոնէութիւն է ընդունել
 Իսկոնում, ձգնել է այնտեղ մի վանքում և
 յետոյ 551 թուին նահատակուել է Գեն-
 շաղուհից: Ինչպէս Չամչեանի նաև Աւգերեան
 նի արիւնքներն են եղել Յայտմաւորքը (2 յուն-
 ուարի և 25 փետրուարի), Աստղիկ, որի մէջ չկայ
 որ և է յիշատակութիւն Գրիգոր Պարսկի մա-
 սին, Սամուէլ Անեցի, Կիրակոս և Սա. Սր-
 բեկեան: Յայտմաւորքի պատմածն է. «Յայտ-
 աւոր (2 յունուար) վկայարանութիւն սրբոյն
 Գրիգորի Պարսկին է Հայոց—25 փետր. Բա-
 ղամբ վկայեցին ի Պարս վասն հաւատոցն Քրի-
 ընդ որս և այլ մի Գրիգոր անուն մեծաւ
 համարձակութեամբ վկայեաց» (Յիզարուզիտի
 վկայարանութիւնից): Սամուէլ Անեցին իւր
 քրոնիկոնում 551 թ. գնում է. «Սուրբն Մա-
 նաճիւր՝ որ անուանեցան Գրիգոր, ազգաւ ուս-
 ժիկ, մարտիրոսութեամբ կատարեցաւ ի Քս.»*:
 Նոյնը կրկնում է և Կիրակոս՝ Յառաջին ամի-
 սորա (Մովսէս կաթողիկոսի?) սուրբն Մանա-
 ճիւր, որ անուանեցաւ Գրիգոր, ազգաւ սա-
 ճիկ (= ուսման) մարտիրոսութեամբ կատար-

րեցաւ: (Աւգ. Լիակ. Վ. II. Ա. հատ. և Չամչ.
 Հայ. Պատմ. Բ. հատ. էջ 255): Սա. Սրբեկեանը
 թուելով հայոց եկեղեց. ժողովները՝ զրում է.
 «Ի. զարձեայ ժողով ի Վփին յաւուրս ներսիս
 կաթողիկոսի, որ վասն քաղկեդոնական սահ-
 մանին և նեսարի աղանդոյն, որ ի պղծայից
 վանքն Գրիգորի Մանաճիւրը ըստժիկս ընդ
 որում էր երանելի մարտապօրիան Սիւնեաց
 Պետրոս՝ աշակերտ Մովսէսի Քերթողի» (Սա.
 Սրբեկ. Պատմ. Նահանգ. Սիւնեաց, Փարիզ
 1859, Հատ. Բ. էջ 201 [գլ. Կթ]):

2. Յիզարուզիտի ընդարձակ և վաւե-
 րական վկայարանութեան մէջ (Վարք և Վկ.
 սրբ. Վենեա. 1874, Հատ. Բ. էջ 124—130)
 իրողութիւնը բոլորովին այլ տեսակ է ներկա-
 յացուած: Պարսից՝ Կաւատի որդի Խոսրով
 թագաւորի ժամանակ Մախոշ անունով մեզը
 պատահմամբ հանդիպում է արտուի Էստուլը.
 «Սա [=Մախոշ] ի զիպուածոյ իմեքէ ի բանա-
 կըս թագաւորին հասաներ և պատահէր չար-
 չարանոց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն
 էր Գրիգորիոս: Հրաշայեալ ընդ համարձակու-
 թիւն նահատակին... յայնմհատ զղջմամբ
 ունէր գմոզութիւնն: Գայր անտի (թագաւո-
 րական բանակից) յաշխարհն Սիւնեաց պա-
 րապելով յունկնդրութիւն զրոց սրբոց, և
 լեալ անդ սակաւ ամիս՝ հասանէ ի Հայս. և
 եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յոստանին
 Հայոց ի Իսկոն: Աւրեմ Գրիգոր Պարսկի
 մարտիրոսութեան տեղը արբունի բանակն,
 է, որտեղից Մախոշը գնում է Սիւնեից, այն-
 տեղից ի Հայս = Այրարատեան գաւառը,
 Իսկոն ոստանը: Այդ ժամանակ Հայոց իշ-
 խանն էր Նիխորականը (էջ 126): Նիխորա-
 կանին յաջորդում է Նախապետ: Երեք տա-
 րի յետոյ Նախապետին յաջորդում է Քնա-
 բիկ: Քիչ յետոյ Պարսից թագաւորը ուզար-
 կում է Հայաստան երկս իշխանս հաւատա-
 ըման այց առնել երկրին, անուն միւսմն Նա-
 տոյ՝ որ կոչի Գրովանդական, և երկրորդին
 Պերոզ, որ էր Աւոյ գաւառին մեղպետ և եր-
 րորդին Խոյսպ՝ որ էր սպասաւոր արքային.
 որք եկեալ ի Հայս բազում ուղղութիւնս
 արարին» (էջ 127): Մախոշ—Յիզարուզիտը
 նահատակում է ի քսաներորդի երրորդի
 ամին Խոսրովու թագաւորի, որ օր երկու էր

* Սամ. էջ 74, Վաղարշապատ, 1893.

քաղոց ամսոյ յաւուր կիւրակէի յերրորդ ժամու* (էջ 130): Վկայարանութեան հեղինակն է Ներսէս Աստիկը, որ բանասկից էր Մատոշին — եւ ես Ներսէս չարչարակից և ընկերակից [այլ շո՛ւ ընկեր] սրբոյն արարի զգաւանութիւնս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (Տե՛ս Յայտմաւուրքս նաեւ Տաշ, Յուց, էջ 77, 564): Յայտմաւուրքի այս յիշատակարանն անշուշտ ծագում է նախնական բնագրից թէև չէ պահուած ընդարձակի (Վարք և Վ.Կ.) մէջ:

3. Մի ուրիշ Ժամանակակից փաւերագիր աւելի ևս պարզում է խնդիրը: Այլշանը մէջ է բերում Ներսէս Բ-ի թղթերից հասուածները Սուրբ Նեստորականներէ մտան: Որք եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատճառաւ փաճառապահութեան և այժմ չարահար պղծակից անիծարբ արուեստիւ իւրեանց՝ յողիս մեր աղկեցին: մինչև իւրեանց պղծութեան հաւատոյ առաջնորդ չե գիտելոցս անեալ: Միւս թղթից. «Յեօթնասաներորդի ամի Խոսրովու արքայից արքայի (= 547-8 ամ Փրկչին), ի մարգարանութեան Նիհորական

(= Նիխորական), արարին իմն շինուած յանուն Մանածրհի Աստիկի որ հաւատացեալ է Քրիստոս և մկրտեալ անուանեցաւ Քրիզոստ և սպանաւ փան նորին հաւատոց, և ապա անուանեցին զնա տեղի ժողովոյ պղծութեան իւրեանց. (յոր հրատուրեալ որայցին և զոմանս ի Հայոց) ... Զայս աղէտ հոգեւոր տեսնելով հասար, թէ պէտ և անագանս ի վերայ պատճառոզ ստութեան նոցա ... Իսկ մեր ոչ կարացեալ համբերել այսպիսի չար զործոց նոցա ... քանզեալ աւերեցաք զտեղի ապա Նի անօրէնութեան նոցայ և բարձաք ի մէջ զղիշերոյցին զոյն խաւար (Այլք, 413-4):

Այս հասուածներից հետևում է, որ արգէն 547-8 թուին շինուած է Գուրնում խուճիկների փանք յանուն Քրիզոստ աստիկուրենն և աստիկի նահատակութիւնը այդ թուից առաջ է*:

4. Ներքևում հրատարակուող փոքրիկ վկայարանութիւնը ապիս է մեզ Քրիզոստ — Մանածրհի նահատակութեան թուականը և մի քանի կարևոր մանրամասնութիւններ:

Ըստ այս վկայարանութեան Մանածրհը նահատակում է Խոսրովի 15-դ արում = Փրկչական 545—546: Նա աղղաւ աստիկեր, այսինքն Պարսկաստանի Ռէ քաղաքից**, իսկ ցեղով նշանաւ որ Միհրան տահմից, որ Պարսկաստանի ամենանշանաւոր տահմից մկն է: Մանածրհը ոչ թէ վանական էր Գուրնում, այլ զինուորական էր Վրաստանում, որտեղի մարզպանն էր այն ժամանակ երուանդ Վշտապը: Քրիստանութիւն ընդունեց Վրաստանում, ուր և կրեց առաջին չարչարանքները՝ գլխիվայր բրածեծ լինելով և

* Խոսրով Ա-ի բազաւորութիւնը ըստ նեօրիկի՝ 531—579 րուին է, ուրեմն այդ բազաւորի 23-դ արին համապատասխանում է փրկչական 553—4 րուին: Կոնիքիթր Յիզորուզիսի վկայարանութեան անգղերէն բարգմանութեան մէջ 23-ի փոխանակ զնում է 43, որով էւ Յիզորուզիսի Ասիաստորութիւնը փրկչական 574 րուին (սեւ Monuments of Early Christianity, London, 1894, Acts of Hixtibouzit, էջ 257): Սակայն այդ ակներեւ սխալ է: Նահաստորեան միջո րուականն է 553 փրկչական: Այդ արի Առասարդի մէկը, ըստ հայ շարժական աստարի, ընկնում է յուլիսի 11-ին: Բաղդի 2-ը աստարական աստուայ 122-դ օրն է, ուրեմն 553 րուին ֆաղդի 2-ը համապատասխանում է անյանբերի 9-ին [21 օր յուլիսից + 31 օգոստ. + 30 սեպտ. + 31 հոկտ. + 9 անյանբ. = 122]: Եւ իսկպսիս 553 րուին անյանբերի 9-ը ընկնում է կիրակի օր [ս. Հովսեփեան ցուցակ, Արարատ, յուլիս 1898]: Ինչպսիս որ շատ միջո գրում է վկայարանը՝ քո օր երկու էր ֆաղդ ամսոյ յաւուր կիրակիի յերրորդ ժամատ: Ուրեմն նահաստորեան միջոցայն րուականն է 553 ր. անյանբերի 9-ը, կիրակի օր, ժամը՝ ըստ այժմեան, արեւմտեան, հաշուի՝ ինկն: Ժամանակագրական մանրամասնութեանց այսպիսի միջոցութիւնը զօրեղ ապացոյց է, որ Ներսէս աստիկը ժամանակակից էր ակամաւսու գրող էր ինչպսիս որ նաեւ վկայում է ինկը: Այսպիսով բարձրանում է և վկայարանութեան արժէքը իրեն պատմական փաւերագրի՝ վեցերորդ դարու կիսից:

* Այժմ ունիմք արդեւ Ներսէս Բ-ի րդերի անրդեպական հրատարակութիւնը, սեւ Գիրք Թղթոց, Թիւֆլիս, 1901, էջ 70—75: Այս հրատարակութիւնն ունի աւելի լուրջ ընթերցում՝ «վանաւաշանութեան» (փոխ. վանաւապանութեան): Տալիս է նաեւ խուճիկների վանքը ֆանգիլու րուականը՝ չի ֆան էւ յորրորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի սուրբ (ի) ֆառասմերոզան, ի կիրակիի իրդոզանինն» (էջ 72): Ուրեմն՝ փրկչական 554 րուին, ժողկազարդի կիրակին: (Ժամօք. սրբագրութեան):

** Ռէ ֆաղափ մասին սեւ Armen. Gram. Հիւրմանի Ա. մասն, էջ 70, որ էւ վկայութիւններ Սերեւսից, Խոսրէ. Այսարհագրութիւնից էւնը: Ռէ=պարսկերէն և ասորերէն Ռայ, Մարասանի մայրաքաղաքն էր:

ղլխի ոսկըը ջարդուելով: Կահատակուեց արքունի գրանը: րանակից ոչ հետու:

5. Այս թանկագին տեղեկութեանց հետ վկայարանութիւնս ունի և մի երկու կապիտ սխալներ որ գրութեան ժամանակի յեանութեան նշաններ են:

Ախպ է վկայի ժամանակակից Խոսրով թագաւորին համարել Արմզի որդի այլ պէտք է լինի որդի Կաւատայ: Ինչպէս որ և իսկապէս ունի Յիզարուզաի վկայարանութիւնը: Աւելի մեծ սխալ է կարծել թէ կրակապաշտ պարսիկները քրիստոնեայ վաներին ամնջում էին նաև հրով (տես ա. 21: քաղում ամնջանաց համբերելն՝ սրոյ և հրոյ): Սրին. Եւպուհի հարածանքների ժամանակ քրիստոնեաների վրայ գործ գրուող բաղմամբիւ շարչարանքների թուում չկայ կրակը և չորրորդ գաբու վկայարանից բացորոշ վկայութիւն ունինք, որ ասում է. բայց ի միջէ միայն խորամանկութեանէ, զոր եմզծ ազատութեան յաշխարհ: Կահեցին գերանելի սուրբնս զի հրով զո՛ ոչ այնչէն: Ժամանակ զոչոչն ոչաշխարհ (Արք. Խոստով. էջ 31: իմ հրատարակութիւնը):

6. Այս նկատողութիւններիցս հետևում է որ մեր այս վկայարանութիւնը չէ կարող գրուած՝ կամ աւելի հաւանականաբար ընդարձակից համառօտում լինել Սասանեան տիրապետութեան ժամանակ այլ շատ աւելի ուշ մահմաական տիրապետութեան շրջանում: Երբ սոխորական էր նաև հրով ամնջել: Բայց այսուամենայնիւ չէ կարող ուշ լինել 12-րդ դարից որովհետև մեր երկու ձեռագրերը՝ Ա և Ե, նոյն այդ գաբու վերջիցն են: Ա և Ե ձառքնորները՝ թուղթի ստորին երկաթագիր մանրամասն նկարագրում են մեր մի այլ աշխատութեան մէջ: (Տես Աղաթ. Աղբիւրներից. Վողարչագատ 1896, էջ 42—60):

7. Գրիգոր աւժիկի վկայարանութիւնը կայ և ստորերէն ընդարձակ և մանրամասն տեղեկութիւններով (Auszüge aus syrischen Akten. persischer Märtyrer, G. Hoffmann, 1, էյրցիգ, 1880, էջ 78—86): Հայ և ստորի վկայարանութեանց ստորերութիւնը բացի ստորու ընդարձակ և մանրամասն իսկ հայի կըրձաւ լինելուց՝ այն է, որ ստորին Գրիգորի հիթանոսական անունը գնում է ոչ Մանա-

ծիրհ, այլ Պիրան-Փուշնասայ որ հայերէնում պիտի լինէր Վշնասայ վերջաւորութեամբ մի անուն: Իսկ նահատակութեան թուականը՝ Անուշիրուան Խոսրովի 10-րդ յունաց 850 թուականը որ է փրկական 538 թըլ ուրեմն հինգ տարով հայից կանուխ: Ասորին չունի նաև Վրաստանի մարզպան երուանդ Վշնասայի անունը, թէև ճոխ է Վրաց, Աղուանից և եղերաց աշխարհների մասին տեղեկութիւններով: Ասորին Պիրան-Փուշնասային համարում է Հիւսիսի մարզպան (—Gouverneur über die Grenze und Mark des Nordens), Փուրզան և Ասանս այսինքն է՝ Վրաց և Աղուանից աշխարհներում: Մինչդեռ հայը երուանդ Վրշնասայ է անուանում մարզպանին և այս Վշնասայն է Մանածիրհ—Գրիգորին առաջին շարչարողը: Թուում է թէ երկու բնագրերում Պիրան-Փուշնասայ և երուանդ Վշնասայը նոյն անձը պիտի լինին բայց երուանդը պարսկերէնում պիտի լինէր Արուանդ և ոչ Պիրան: Մեկ թուում է որ հայ բնագրի տեղեկութիւնը պիտի լինի ուղիղը քանի որ Գրիգորի Մանածիրհ անունն մասին ժամանակակիցի վկայութիւն ունինք Ներսէս Բ-ի թղթում: Ասորի և հայ վկայարանութիւնները միմեանցից անկախ են:

8. Գրիգոր աւժիկը ինչպէս և Յիզարուզիար զոհ գնացին ոչ թէ քրիստոնեաների դէմ ընդհանուր հարածանքի այլ Սասանեան պետական այն օրէնքի գործադրութեան, որով արդելում էր մարդեգականին «դեհակորոյս» լինել, այսինքն ուրիշ կրօնի դասնայ ճիշտ այնպէս ինչպէս քրիստոնեայ շատ տարութեանց մէջ զանազան պատիժների սպառնալիքով արդելում էր տիրող կրօնից և դաւանութիւնից հրաժարուիլը կամ ինչպէս նոյն իսկ այժմ՝ տիրող օրէնքի գործութեամբ արդելում է առս պետութեան մէջ քրիստոնեային ոչ—քրիստոնեական կրօն ընդունելը և մանաւանդ պետական կրօնին՝ պառօտաւ դաւանութեան պատկանողին՝ նաև որևէ այլ քրիստոնեական դաւանութեան դաւանալը: Այս օրէնքի հիման վրայ էր օրինակ որ Յիզարուզիար բանակիցներից Ներսէս Աւժիկը և Մահակ Ատրպատականցին կարողանալով սպառնացան ի մանկութեանէ՝ իրենց քրիստոնեայ լի-

ները՝ աղատում են. «Ասէ մագպան ցներսկս՝
 Ընդէր կզեր քրիստոնեայ:—Ասէ երանելին.
 Մայր իմ քրիստոնեայ էրս և ի տղայութեանն
 էի հաւատացեալ ի Քրիստոսս չգիտեմ ընտ-
 դձեր դենդ: Հարցեալ և ընդ Սահաի և նա
 առէ. Ի տղայութեանն լեալ էի քրիստոնեայ»
 (Վրբ. և Վ. Կ. էջ 128): Ուստի և մեր հրա-
 տարակած այս վկայարանութիւնը՝ համաձայն
 է սրտմտական ճշմարտութեան՝ երբ հարած-
 ուած է համարում միայն «նորահաւաններին»
 — մարդկականութիւնից քրիստոնէութիւն
 ընդունողներին որոնց մասին պարսիկ պետա-
 կան օրէնքը երբեմն զանցառութեան էր
 տրւում և երբեմն խտաբե գործադրւում էր:

9. Աւելորդութեան արժանի է և այն,
 որ կրօնական ազատութիւնը սահմանափակող
 այս օրէնքը հազիւ թէ հակասէր քրիստոնեայ
 հպատակների աշխարհահայեցողութեանը, ու-
 բրովհետեւ խղճի ազատութեան մասին նոյն սե-
 սակէան ունէին և քրիստոնէաները: Քրիստոնէ-
 ութիւնն ուրացողներին մահ սպանացող նա-
 հապիվանի կանոնը անհրաժեշտ ապացոյց է, որ
 այս կէտում ոչնչով չէին տարբերւում քրիստո-
 նեաները մարդեգականներից: Նահապիվանի Բ-դ
 կանոնն ասում է. «Եթէ զք ի կախարդութեան
 գտցի կամ յուրացութեան և կամ յայլ ի շար
 գործու և ի վզջումն և յազաշխարութիւն
 ոչ եկեացեն՝ ըստ Գրոց հրամանի քարկոծ
 լինին...»:

Հին—կտակարանի վրայ հիմնուած այս
 կանոնը՝ անշուշտ նոյնչափ հիտու է աւետա-
 րանի ոգուց, որչափ որ մտ է մոգական օրէն-
 քին, որի լոկ անդրադարձութիւնը կարող է
 համարուել: Աւրեմն՝ հակառակ մեր մի կարգ
 զրոյնների կարծեաց, հինգերորդ դարի հայե-
 րը խղի ազատութեան խնդրում հազիւ
 թէ տարբերուէին սիրող պարսիկներից:

10. Թւում է թէ Վանաձիհըրը թերևս
 նաև Յիզրու գիտը* նեստորական վկաներ էին՝

* Առանց աղբիւր նշանակելու Այիշակը մէջ է քե-
 րում նետուէալ հասուածը. «Եւ բարձեալ գտուր մար-
 մնն սրոյ մարտիրոսին՝ մեծի հայրապետին ներսիսի,
 բովանակի նպակագոսոս և գրեթիք կեկեցուց, եղև մեծ
 ի սուր կեկեցից կարողութեամբ յարեկից կուրմակ,
 շննալ ի վերայ վայարուէ սուր՝ կոպածոյ լարտերս:
 (Այր. 406): Թե կարողիտի անունը և քե սեղագրական

յամենայն գեպս նաև նեստորականներից
 առանձնապէս յարգուած: Վերևում տեսանք
 թէ ինչ լեզուով է խօսում Ներսէս Բ կա-
 թողիկոսը: Վանաձիհըր—Վրիզորի եկեղեցին
 կամ վանքը անուանում է շինուած իմնս
 նեստորականների եպիսկոպոսին «պղծութեան
 հաւատոյ առաջնորդ և շեպիսկոպոս, և ին-
 իսկ Յիզրուզիտի վկայութեան ժամանակ
 տեսնում ենք թէ ինչպէս է վարւում մի
 մահապարտ թի ժողովոյն Թուժկաց» [համե-
 մատիր վերևում առաջ բերուած Ներսէս
 Բ-ի խօսքերը՝ «և ապա անուանեցին զնա առ-
 ղի Ժողովոյ պղծութեան իւրեանց»]: Ահա
 այդ հատուածը՝ «Իկեցաւ ի նմին առւեր
 հանել ի վայտ երկուս մահապարտս զօրս և
 հանին իսկ ընդ նոսա, մինն էր ի ժողովոյն
 Թուժկաց, զօր ամեալ ի վայտն՝ համբուրեր
 զոսս սուրբ վկային [Յիզրուզտի] և առեալ
 հող արիւնախառն որ ի կաթուածոց վկային՝
 ընկնոյր ի ծոց իւրս»:

11. Հարց է ծագում մեր կարծիքով թէ
 արդեօք Յիզրուզիտի վկայարանութիւնը որի
 մէջ մանրամասն յիշուած են պարսիկ մարդ-
 պանները, պատմական անուններ և տեղեկու-
 թիւններ, որ մեզ յայտն չեն ուրիշ աղբիւր-
 ներից, և որի մէջ չէ յիշուած ժամանակա-
 կից Հայոց կաթողիկոսը, որ նստում էր նոյն
 իսկ Գուրնումս բնագիւր է արդեօք թէ թարգ-
 մանութիւն ասորերէնից: Ներսէս Աւաթիք
 թէ և հարկաւ կարող էր իմանալ հայերէն
 բայց հաւանական է թւում, որ նա զբա-
 կիներ, ասորերէն իւր կրօնակիցների համար
 յետոյ միայն այդ վկայարանութիւնը կաթող-
 մանուէր հայերէն: Ուստի և որոնելու է թէ
 չէ՞ պահուած ասորերէնում որ և է հետք
 Յիզրուզիտի վկայարանութիւնից:

12. Եթէ ոչ Յիզրուզիտի գտնէ Վա-
 նաձիհըր—Վրիզորի վկայարանութիւնը յայտ-
 նի պիտի լինէր և վրացիներին քանի որ
 Վրիզորը ինքը նշանաւոր Միհրան սոհմից
 եթէ ոչ մարդպան ինչպէս գրւում է ասորին
 այլ գտնէ նշանաւոր գինուորական պաշտօնա-
 մանրամասնութիւններ ցոյց են տալիս որ շատ աղ-
 բիւրի է: Յիզրուզի մանասալորիւրը նեստրական խո-
 ժիկների հաշտութեան և նրանց ժողովական լանդուե-
 լուց ասաց է:

10 զաստուած պաշտութիւն երկրպագեացն արեգական և պաշտեացն զհօր:

Եւ ի հասանել այսպիսի հրամանի առ զաստուորս տեղեաց տեղեաց՝ խոսովութիւն յոյժ լինէր սրբոյ եկեղեցւոյ և 15 տրամութիւն մեծ, զի յամենայն դաւառս ունելով ի նորահաւատիցն՝ սաստիկ և դառն տանջանս ի վերայ հասուցանէին, որոց ժամանեալ աստուածային ազնականութիւնն կարծրացուցանէր զսիրտս 20 նոցա ի ժուժկալութիւն, յորմէ բազում տանջանաց համբերէին՝ սրոյ և հրոյ, և խեղճման և փայտի, բարի ընթացիւք կատարեալ զվարս կենաց իւրեանց:

Յորում ժամանակի այր ոմն, սրոյ ա- 25 նուն էր Մանածիհօր, աշխարհաւ Ռաժիկ, յազգէ որ կոչի Միհրան. սա էր ի զինուորութեան ի Վրաց աշխարհին և յուսացեալ յաստուած երկին և երկրի, ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, և 50 անուանեալ Գրիգորիոս, զոր սուրբ Հոգին կարգեալ էր ի դասս դուարթնոցն:

Այս երանելիս Գրիգորիոս բազում տանջանս կրեաց ի Վրաց մարդպանէն, որոյ անուն էր Երուանդ Վչնասպ: Քան- 55 զի կախեալ զսուրբն զլիսիպայր բրածեծ առնէին և ի գելարանացն զլիսոյն ոսկրն բեկանէր: Եւ այսպէս անողորմ՝ դատեալ զսուրբն՝ ոչինչ կարաց անաւրէնն խախտել զհաստատութիւն հաւատոց նորա:

40 Ապա խորհեալ վասն նորա, զի էր այլն երևելի, առաքէր զնա կապանաք ի գունն արքունի: Եւ հասեալ սրբոյն ի բանակն՝ յանդիման լինէր մոգպետին:

Եւ ուսեալ եթէ բազում ինչ չարչարեալ սրբոյն չուրացաւ՝ մտեալ յարքունիս հարցանէր վասն սրբոյ վկային զարքայն, թէ որպէս տացէ հրաման սպա- 45 նանել զնա:

Պատասխանի ետ թաղաւորն և տաէ. 50 Մի այր տաս սպանանել և բազում քրիտանեայս առնել, զի ի նորա մեռանին բազումք թողուն զմեր զենս և դառնան յաստուած նոցա:

Ասէ մոգպետն առաջի թաղաւորին. 55 Ձառագ այր ահմիկ որ լինի դենակո-

րոյս ոչ հրամայեն սպրեցուցանել մեր աւրէնքն:

Եւ ընկալաւ հրաման յարքայէն սպա- նանել զերանելին: Եւ ելեալ նստէր ա- 60 մենայն նախարարաւքն դատել զսուրբն: Եւ ամեալ առաջի՝ խոստանայր նմա պարգևս և պատիւս մեծամեծս, զի ուրացի դճմարիտ հաւատս և երկրպագեցէ տարերց՝ արեգական և լուսնի և ջրոյ և 65 հրոյ. ապա թէ ոչ դառնայցէ՝ սպառնայր ի վերայ նորա ամել տանջանս անհնարինս և մահ՝ դժնդակ:

Իսկ սուրբն Գրիգորիոս առաւել հա- մարձակեալ բարձր ձայնիւ ուրանայր զբազմաստուածութիւն նոցա և խոստո- 70 վանէր զհաւատս Քրիստոսի սրբւոյն Աստուծոյ բարձրելոյ որ յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ միասնական երրորդութեանն, բարձրաբարբառ ա- 75 զազակելով խոստովանէր յանդիման ամենայն պարսկական մոգակոյտ հրապարակին:

Յայնժամ հրամայեաց մոգպետն մո- գուցն՝ հաւատարմաց տանել զսուրբն 80 Գրիգոր ի դատական տեղի մի և սրով սպանանել:

Եւ նոցա տարեալ զսուրբն ի տեղին՝ զլիսատեցին զնա մինչդեռ փառաւորէր զամենասուրբ զերրորդութիւնն, զՀայր և 85 զՈրդի և զսուրբ Հոգին, որում և մեք երկրպագելով զովութիւն մատուցուք մեծի իշխանութեանն, զի նմա վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ՝ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն:



ևաք 12 B այսպիսոյ 14 B եկեղեցո 18 B ժա- մանել ա ծ 23 A կատարել 24 B որում 25 B մա- նածիր՝ 31 A զլուարթնոցն 32 A երանիս 37 B անողորմն դատել 42 B արքայն 43B մոգպետին 51 B մեռանին 61 B ամել 63 B հաւատն 65 B ապա 67 AB զժընդակ 68 B համարձակել 70 B նոցայ 71 B գնաւատն 72 A բարձրելս 82 B տարել 86—89 B մատուցուք գոհութիւն, սուր- հնութիւն և փառք, յաւիտեան յաւիտենից ամեն: